ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԿԱՆՉՎԱԾ
SPECIAL TOPIC: CALLED

Միշտ Աստված է նախաձեռնությունը վերցնում հավատացյալներին դեպի Իրեն կանչելու, ընտրելու և հետամուտ լինելու հարցում (տես՝ Հովհ. 6:44,65, 15:16, 1 Կորնթ. 1:1-2; Եփես. 1:4-5,11): «Կոչում» տերմինը մի քանի աստվածաբանական նշանակությամբ է գործածվում:

Ա. ՀԿ-ում «անունը կանչելը» միշտ երկրպագության համատեքստում էր առկա (տես՝ Ծննդ. 4:26, 12:8, 21:33, 26:25, Ելից 34:5):

Բ. Մեղավորները փրկության են կանչված Աստծո շնորհքով (այսինքն՝ Ելից 34:6-7) Քրիստոսի կատարած գործի և Հոգու կողմից համոզվելու շնորհիվ (այսինքն՝ *klētos*, տես՝ Հռոմ. 1:6-7, 9:24, որը աստվածաբանորեն նման է 1 Կորնթ. 1:1-2 և 2 Տիմ. 1:9, 2 Պետ. 1:10):

Գ. Մեղավորները կանչում են Տիրոջ անունը փրկվելու համար (այսինքն՝ *epikaleō*, տես՝ Գործք 2:21, 22:16, Հռոմ. 10:9-13): Այս սահմանումը երկրպագության հրեական դարձվածք է:

Դ. Հավատացյալները կանչում են Նրա Անունը ճգնաժամերի և ճնշումների ժամանակ (այսինքն՝ Գործք 7:59):

Ե. Հավատացյալները կանչված են Քրիստոսանման կյանքեր վարելու (այսինքն՝ *klēsis*, տես՝ 1 Կորնթ. 1:26, 7:20, Եփես. 4:1, Փիլ. 3:14, 2 Թեսաղ. 1:11, 2 Տիմ. 1:9):

Զ. Հավատացյալները կանչված են ծառայության գործին (տես՝ Գործք 13:2, 1 Կորնթ. 12:4-7. Եփես. 4:1):